ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
«ՋԱՐԻՇԱՏ (ԱՐԱՄ) ՄԱՐՏԻՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք.Արմավիր,Շահումյան 3
☏ (0-237) 2-35-60
E-mail: armavir.med@gmail.com

08-869/859 «16» սեպտեմբերի 2024թ.

«Աննարկա» ՍՊԸ-ի տնօրեն
տիկին Լիլիթ Փնջոյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
պայմանագրի միակողմանի լուծման մասին

Հարգելի տիկին Փնջոյան

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի տվյալների Ձեր և 06.05.2023թ. մինչև 20.06.2025թ. ժամանակահատվածում գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, որը հանդիսանում է գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջները, ըստ որի, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար, «Ջարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի և Ձեր ընկերության միջև 2024թ. փետրվարի 15-ին կնքված ՆՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-14/24-15 պայմանագիրը 2024թ. սեպտեմբերի 16-ից կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված:

Առաջարկում եմ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում «Ջարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի ԱրարատԲանկ ԲԲԸ-ում ունեցած 1510040627260100 հաշվեհամարին փոխանցել պայմանագրի և որակավորման ապահովման գումարները պայմանագրի չկատարված մասով՝ համապատասխանաբար 43776 և 65664 ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ նաև, որ եթե մինչև 2024թ. սեպտեմբերի 20-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի պայմանագրի և որակավորման ապահովման գումարները և վճարումը հաստատող փաստաթղթերը ներկայացվի «Ջարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ, ապա Ձեր Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրեն՝ Հ. Հովհաննիսյան